ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 72-Ա **«19» հունվարի 2023 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
19 հունվարի 2023 թ.
N 72-Ա հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) կազմակերպում է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում **գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի** հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտը լրացնում և ներկայացնում է Հայտատուն՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի միջոցով (գրանցվելով https://grants.scs.am/ հարթակում) մինչև **2023 թվականի փետրվարի 24-ը** և **2023 թվականի օգոստոսի 25-ը ներառյալ**: Հայտերի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում (http://scs.am/):

Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ) մինչև **2023 թվականի մարտի 3-ը և 2023 թվականի սեպտեմբերի 1-ը** ներառյալ:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Կոմիտեի գիտական քաղաքականության վարչության գիտական մշակումների պատվերի ձևավորման և ինովացիոն ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00 - 18:00, հեռ.՝ 010 210 140 (105):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
19 հունվարի 2023 թ.
N 72-Ա հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **Մրցույթը**

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի (այսուհետ՝ **Ծրագիր**) հայտերի (այսուհետ՝ **Հայտ**) ընտրության մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**)՝ 2023 թվականի հունվարի 19–ի N 72-Ա հրամանի:

1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված գիտական և գիտատեխնիական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով:

1.3. **Մրցույթն** ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող գիտական կազմակերպությունների և բուհերի (այսուհետ՝ **Կազմակերպություն**) աշխատակիցների մասնագիտական վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը:

1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով (Հավելված N 2.1):

1.5. Մրցույթի հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու կարգը, չափանիշները, հայտերի գնահատման գործընթացը և շահառու Ծրագրերի ֆինանսավորումն ու հաշվետվողականությունը:

2. Նպատակը

2.1. Մրցույթի նպատակներն են.

- աջակցել հետազոտողների մասնագիտական որակավորման բարձրացմանը,
- բարձրացնել **Կազմակերպության** գիտական ներուժը,
- հետազոտողներին ընձեռել արտերկրի լավագույն գիտական կազմակերպություններում և բուհերում վերապատրաստվելու հնարավորություն,
- օգտագործել և փոխառել գիտահետազոտական գործունեության մեջ առաջատար երկրների փորձն ու հմտությունները,
- նպաստել հետազոտողների ինտեգրմանը միջազգային հետազոտական տարածքում,
- ներգրավել Սփյուռքի գիտական ներուժը,
- նպաստել գիտության ոլորտում միջազգային համագործակցության զարգացմանը:

3. Հայտատուն

3.1. Հայտատու կարող է լինել՝

3.1.1 1973 թվականի հունվարի 1-ից հետո և մինչև 1988 թվականի հունվարի 1-ը ծնված (35-50 տարեկան) այն անձը, (այսուհետ՝ **Խումբ 3**) ով՝

- **Կազմակերպության** հետ ունի աշխատանքային պայմանագիր,
- զբաղվում է գիտահետազոտական գործունեությամբ,
- ունի գիտական աստիճան

3.1.2 **կամ** մագիստրատուրայի ուսանողը, ով՝

- ընդգրկված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման որևէ ծրագրում (այսուհետ՝ **Խումբ 4**):

3.2. **Հայտատուն** պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ռեզիդենտ:

3.3. **Խումբ 3-ի** դեպքում՝ **Հայտատուն** վերջին հինգ տարիների ընթացքում, տվյալ ուղղությամբ պետք է ներկայացնի՝

- առնվազն երկու գիտական հրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)»), **կամ** գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների հրապարակած գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, **կամ** «Scimago Journal & Country Ranking» պորտալի առնվազն Q4 քառորդ, իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում,
- **կամ** մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում:

3.4. **Հայտատուն Կազմակերպությունում** չպետք է զբաղեցնի գիտական ստորաբաժանման (խումբ, լաբորատորիա, բաժին, կենտրոն և այլն) ղեկավարի պաշտոն կամ հանդիսանա «Գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2020), «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2021), «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» մրցույթի (2022) և «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» մրցույթի (2022) շահառու ծրագրի ղեկավար:

3.5. **Հայտատուն** սույն **Մրցույթին** չի կարող ներկայացնել մեկից ավելի **Հայտեր**:

3.6. **Հայտատուն** պետք է տիրապետի անգլերենին՝ առնվազն խոսակցական մակարդակով:

4. Կազմակերպությունը

4.1. **Կազմակերպությունը** պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող գիտական կազմակերպություն կամ բուհ:

4.2. **Կազմակերպության, Կոմիտեի** և ֆինանսավորման երաշխավորված շահառուի միջև ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է «**Գիտական և գիտատեխնիկական գործունեության** պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման

շրջանակներում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրի իրականացման համար **պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» եռակողմ պայմանագիր** (այսուհետ՝ **Պայմանագիր**):

4.3. **Կազմակերպությունը պետք է** աջակցի **Ծրագրի** իրականացմանը:

4.4. **Ծրագրի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս որպես հեղինակի աշխատավայր (affiliation) պետք է նշվի **Կազմակերպությունը**:

4.5. **Ծրագրի** ավարտից հետո **Կազմակերպությունը** շարունակում է աշխատանքային պայմանագիրը շահառուի հետ առնվազն պահպանելով նրա պաշտոնը:

5. Ընդունող կազմակերպությունը և ղեկավարը/մենթորը

5.1. Ընդունող է համարվում այն օտարերկրյա գիտական կազմակերպությունը, համալսարանը, կամ հետազոտական բաղադրիչ ունեցող ձեռնարկությունը (research-intensive enterprise), որտեղ **Հայտատուն** պատրաստվում է անցկացնել վերապատրաստումը (այսուհետ՝ **Ընդունող կազմակերպություն**):

5.2. **Ընդունող կազմակերպությունը** պետք է պաշտոնապես հաստատի **Հայտատուին** ընդունելու մտադրությունը:

5.3. **Ընդունող կազմակերպությունում Հայտատուն** պետք է ունենա **ղեկավար/մենթոր**, ով կհամակարգի վերապատրաստման ընթացքում նրա մասնագիտական գործունեությունը:

5.4. **Ղեկավարը/մենթորը** պետք է իր պաշտոնական էլ. հասցեից **Կոմիտեի** grants@scs.am էլ. հասցեին ուղարկի գրություն, որտեղ նշված կլինի իր համաձայնությունը **Հայտատուին** ընդունելու, ընդունման ժամկետների և ներկայացված գիտական ծրագրով հետազոտություններ իրականացնելու վերաբերյալ: Գրության մեջ **ղեկավարը/մենթորը** նշում է նաև այն ծախսերը, որոնք **Ընդունող կազմակերպությունը** պատրաստվում է հոգալ **Հայտատուին** ընդունելու ընթացքում (եթե նման ծախսեր նախատեսվում են):

5.5. **Ղեկավարը/մենթորը** իր հավանությունն է տալիս **Ծրագրում** ներկայացվող օրացուցային պլանին (ըստ եռամսյակների) կամ Գանտի աղյուսակին:

5.6. **Ղեկավարը/մենթորը** պետք է ունենա գիտությունների դոկտորի (PhD) կամ համարժեք որակավորում և հանդիսանա **Ընդունող կազմակերպության** աշխատակից՝ առնվազն մինչև **Ծրագրի** ավարտը:

6. Ժամկետները

6.1. Վերապատրաստման ծրագրի տևողությունը կարող է լինել 2-ից մինչև 12 ամիս:

6.2. **Ծրագրին** դիմելու վերջնաժամկետներն են՝ 2023 թվականի փետրվարի 24-ը և 2023 թվականի օգոստոսի 25-ը ներառյալ:

6.3. **Մրցույթի** արդյունքներն ամփոփվելու են համապատասխանաբար մինչև 2023 թվականի հունիսի 2-ը և 2023 թվականի դեկտեմբերի 1-ը:

6.4. **Ծրագրերը** սկսվում և կատարվում են դրանց իրականացման համար կնքվող **Պայմանագրերում** նշված ժամկետներում:

7. Ծրագրի ֆինանսավորման ծավալը

7.1. Յուրաքանչյուր շահառուին տրամադրվող ֆինանսավորման առավելագույն չափը կարող է լինել՝

- **Խումբ 3-ի** դեպքում՝ 11.800.000 ՀՀ դրամ 12 ամսվա համար:
- **Խումբ 4-ի** դեպքում՝ 10.600.000 ՀՀ դրամ 12 ամսվա համար:

II. ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Հայտի ներկայացումը

8.1. **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Հայտատուն՝ Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի՝ grants.scs.am *(այսուհետ՝* ***Համակարգ****)* միջոցով:

8.2. **Կոմիտե** են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- **Հայտատուի** դիմումը (Հավելված N 2.2),
- **Համակարգում** ձևավորված և ծածկագիր ստացած **Հայտի** տիտղոսաթերթը, ֆինանսական նախահաշիվը (այսուհետ՝ **Նախահաշիվ**),

- **Կազմակերպության** (բուհերի դեպքում ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացությունը, որը պետք է պարունակի տեղեկություն **Ծրագրի** նպատակի, կարևորության և արդիականության վերաբերյալ,
- **Կազմակերպության** ղեկավարի կողմից գրություն այն մասին, որ **Հայտատուն** հանդիսանում է **Կազմակերպության** աշխատակից և **Ծրագրի** ավարտից հետո նախատեսում է շարունակել աշխատանքային պայմանագիրը նրա հետ,
- **Խումբ 4-ի դեպքում** մագիստրատուրայի ուսանող լինելը հավաստող տեղեկանք, որտեղ նշված է ուսումնառության տեսակը (առկա, հեռակա), ընդունվելու տարին, **Կազմակերպությունը**:
- **Հայտատուի** կենսագրությունը (CV),
- **Ղեկավարի/մենթորի** կենսագրությունը (CV),
- **Ընդունող կազմակերպության** կողմից պաշտոնական գրություն **Հայտատուին** ընդունելու մտադրության վերաբերյալ,
- **Ղեկավարի/մենթորի** գրությունը, **Հայտատուին** ընդունելու և ներկայացված գիտական ծրագրով հետազոտություններ իրականացնելու վերաբերյալ,
- **Հայտատուի**՝ անգլերենի իմացության մասին տեղեկանք (առկայության դեպքում):

8.3. **Կազմակերպության** կողմից ներկայացվող **Հայտերին** վերաբերող բոլոր պահանջվող փաստաթղթերը մեկ ընդհանուր փաթեթով **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** լիազորված անձը (գիտական քարտուղար կամ այլ)՝ առձեռն մինչև 2023 թվականի մարտի 3-ը և 2023 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ, աշխատանքային օրերին ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 808 սենյակ, հեռախոս՝ (010) 210140 /105/):

Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված կարգի և ժամկետների համաձայն, չունեն ծածկագիր, հետևաբար, քննարկման ենթակա չեն: Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը:

9. **Նախահաշվի կազմությունը**

9.1. **Նախահաշվի** «Վերապատրաստման վճար» հոդվածը կազմելիս **Հայտատուի** ամսական վարձատրության առավելագույն չափն ընդունել՝

- Խումբ 3-ի դեպքում՝ 900.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ),

- Խումբ 4-ի դեպքում՝ 800.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ):

9.2. «Այլ ծախսեր» հոդվածի հաշվարկային չափն ընդունել մինչև 1.000.000 ՀՀ դրամ, որը կարող է օգտագործվել արտերկիր մեկնելու և վերադառնալու ծախսերի համար (վիզա, ճանապարհածախս, ապահովագրություն և այլն):

9.3. **Նախահաշվով** ներկայացված բոլոր ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

9.4. **Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող է քննարկվել հայտերի գնահատման համար ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ **Խորհուրդ)** և **Հայտատուի** հետ միասին և կարող է լրամշակվել փոխադարձ համաձայնությամբ:

III. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

10. Տեխնիկական ստուգումը

10.1. **Կոմիտեում** ուսումնասիրվում է **Մրցույթին** ներկայացված և **Համակարգում** ծածկագիր ստացած **Հայտերի** տեխնիկական համապատասխանությունը **Մրցույթի** հրավերի պայմաններին:

10.2. Տեխնիկական ստուգման արդյունքում **Կոմիտեն** կազմում է փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը և այն տրամադրում է **Խորհրդին**:

11. Փորձաքննությունը

11.1. **Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում և հաստատում է **Հայտերի** փորձաքննության առաջին և երկրորդ փուլերի (գիտական փորձաքննության և հարցազրույցի) վարման կարգը և գնահատման թերթիկները:

12. Փորձաքննության առաջին փուլը

12.1. Փորձաքննության առաջին փուլում **Խորհուրդը**, հաշվի առնելով **Ծրագրի** ընդարձակ ամփոփագիրը (Հավելված N 2.3), **Հայտատուի** գիտական հետագիծը (track record), մասնագիտական կենսագրությունը (CV), **Ընդունող կազմակերպությունը** և ղեկավարի/մենթորի համապատասխանությունը **Ծրագրի** (Հավելված N 2.4) նպատակներին, կոնսենսուսի սկզբունքով ձևավորում է տվյալ փուլը հաղթահարած

Հայտերի ցանկը, որտեղ ներառված **Հայտերն** անցնում են փորձաքննության հաջորդ փուլ:

12.2. Առավելություն կտրվի այն **Հայտերին**, որտեղ ղեկավարը/մենթորը վերջին 10 տարիների ընթացքում հանդիսացել է Եվրոպական Հետազոտական Խորհրդի (European Research Council (ERC)) որևէ գիտական դրամաշնորհի շահառու:

12.3. **Խորհրդի** կողմից քննարկվում է Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն պարունակող **Հայտը** փորձաքննության երկրորդ փուլ տեղափոխելու հարցը:

12.4. Փորձաքննության առաջին փուլը չհաղթահարած **Հայտատուները** ***Համակարգի*** *միջոցով տեղեկացվում են դրա մասին:*

13. Փորձաքննության երկրորդ փուլը

13.1. Փորձաքննության առաջին փուլը հաղթահարած **Հայտերը** ենթարկվում են գիտական փորձաքննության, իսկ **Հայտատուների** հետ անցկացվում են հարցազրույցներ: Այս փուլում գնահատվում են խնդրի արդի վիճակը, նորույթը, հեռանկարը, իրականացման նախադրյալները, համապատասխանությունը ոլորտի զարգացման տենդենցներին, աշխատանքի ծավալի և իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, միջգիտակարգային առնչությունները, **Կազմակերպությունը**, **Ընդունող կազմակերպությունը**, ղեկավարը/մենթորը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

13.2. **Հայտը** գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող է հանդես գալ նաև **Խորհրդի** անդամը:

13.3. Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

13.4. Երկու փորձագետների գնահատականները գիտական փորձաքննության առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում **Հայտը** ենթարկվում է փորձաքննության երրորդ փորձագետի կողմից: Այդ դեպքում գիտական փորձաքննության գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Երեք փորձագետների

գնահատականների հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

13.5. Գիտական փորձաքննության ժամանակ փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

13.6. Հարցազրույցի ժամանակ **Խորհրդի** յուրաքանչյուր անդամ լրացնում է հարցազրույցի գնահատման թերթիկը:

13.7. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

13.8. Փորձաքննության երկրորդ փուլի գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականի գումարն է:

13.9. **Կոմիտեի** և փորձագետների կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

14. Գնահատման արդյունքները

14.1. **Կոմիտեն** փորձաքննության երկրորդ փուլի **Հայտերի** գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ և ներկայացնում **Խորհրդին**՝ քննարկման:

14.2. **Խորհուրդը Կոմիտեի** նախագահին է ներկայացնում **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը:

14.3. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը և **Նախարարին** է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և նախատեսված ֆինանսավորման չափը հաստատելու մասին հրամանի նախագիծ:

14.4. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տվյալ **Կազմակերպության** շահառու **Հայտերի** ցանկը և յուրաքանչյուր **Հայտի Նախահաշիվը**:

14.5. **Կոմիտեն Համակարգի** (grants.scs.am) միջոցով **Հայտատուներին** տրամադրում է փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

14.6. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը հաստատվելուց հետո այն տեղադրվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Հայտի չդիտարկումը

15.1. **Հայտը** չի քննարկվում հետևյալ դեպքերում.

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- **Հայտատուի** կողմից նախկինում իրականացված նախագծի կամ գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ **Խորհրդի** կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- չի բավարարում **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- **Հայտատուն** միաժամանակ հանդիսանում է այլ նմանատիպ վերապատրաստման նախագծի շահառու:

16. Այլ պայմաններ

16.1. **Հայտերը** քննարկելիս առավելություն կտրվի այն **Ծրագրերին**, որոնց իրականացման ընթացքում **Հայտատուն** հնարավորություն կունենա նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել լաբորատորիաներում, որոնք հագեցած են այնպիսի գերժամանակակից սարքավորումներով, որոնցից առկա են կամ գնվելու են **Կազմակերպությունում**:

16.2. Վերապատրաստման ընթացքում շահառուն կարող է պահպանել իր ներգրավվածությունը **Կոմիտեի** կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերում՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ յուրաքանչյուր ծրագրի ղեկավարից:

16.3. **Ծրագրի** հաջող կատարումը կդիտարկվի որպես առավելություն շահառուի ներգրավմամբ **Կոմիտեի** հայտարարած հետագա դրամաշնորհային ծրագրերին դիմելիս:

16.4. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Հայտ** և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում պետք է առաջնորդվել «Հեղինակային իրավունքի և հարակից

իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

16.5. **Ծրագրի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել **Կոմիտեի** կողմից ստացած աջակցության մասին.

- *This work was supported by the Science Committee of RA (Research project № _____).*

16.6. **Ծրագրի** իրականացման ավարտից հետո **Կոմիտե** է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ պլանավորված արդյունքների և ստացված փաստացի արդյունքների համապատասխանության և հաշվետվությունն ընդունելու մասին:

16.7. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Ծրագրի** անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

Հավելված N 2.1

Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.1 Մաթեմատիկա	4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	4.2 Բուսաբուծություն
1.3 Ֆիզիկա և աստղագիտություն	4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
1.4 Քիմիա	4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	***5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.6 Կենսաբանական գիտություններ	5.1 Հոգեբանություն
2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	5.2 Տնտեսագիտություն և գործարարություն
2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն	5.3 Մանկավարժական գիտություններ
2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	5.4 Սոցիոլոգիա
2.3. Մեխանիկա	5.5 Իրավունք
2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն	5.6 Քաղաքական գիտություններ
2.5 Քիմիական տեխնոլոգիաներ	5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
2.6 Նյութագիտություն	5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
2.7 Բժշկական սարքաշինություն	***6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
2.8 Էկոլոգիա	6.1 Պատմություն, հնագիտություն
2.9 Կենսատեխնոլոգիա	6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն
2.10 Նանոտեխնոլոգիա	6.3 Փիլիսոփայություն, էթիկա
3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն
3.1. Ընդհանուր բժշկություն	6.5 Արվեստագիտություն
3.2. Կլինիկական բժշկություն	
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա	

Հավելված 2.2
Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթին մասնակցության «_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2023 թ.

Հավելված N 2.3
Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթի հրավերի

Ծրագրի վերնագիրը

Ընդարձակ ամփոփագիրը

Ընդարձակ ամփոփագիրը գնահատվում է փորձաքննության առաջին փուլում, հարկավոր է ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 2 էջ:
Ընդարձակ ամփոփագիրը պետք է լինի Ծրագրի հակիրճ փարբերակը՝ ներառելով հետազոտության կարևորությունը և վերապատրաստման նպատակահարմարությունը:

Ծրագիր

Ներկայացնել հայերեն կամ անգլերեն, մինչև 10 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. **Համառոտ բնութագիրը** (անոտացիա)

2. **Գիտական ծրագիրը** (հետազոտության կարևորությունը, իրագործելիությունը, հնարավոր ազդեցությունը, մեթոդաբանությունը և այլն)

3. **Օրացուցային պլանը** (ըստ եռամսյակների կամ Գանտի աղյուսակ)

4. **Վերապատրաստման նպատակահարմարությունը** (ընդունող կազմակերպության, ղեկավարի/մենթորի ընտրության նպատակահարմարությունը և համագործակցության հեռանկարը, վերապատրաստման նպատակը, ղեկավարի/մենթորի գիտական կադրեր ղեկավարելու փորձը, ընդունող կազմակերպությունում Հայտատուի աշխատանքային ծանրաբեռնվածության աստիճանը և այլն)

5. **Տվյալ ուղղությամբ ունեցած ձեռքբերումները** (գիտական հոդվածներ, դրամաշնորհներ, գիտաժողովների մասնակցություն և այլն)

6. **Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները** (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

7. **Օգտագործված գրականության ցանկը**